## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/03-8

ք. Երևան «20» մարտ 2018թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Ջիլավյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ամարթյալն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

2.1.8 Չնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2,914,680 (երկու միլիոն ինը հարյուր տասնչորս հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման՝ համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ կառավարության աշխատակազմ | «Սմարթլայն» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական թ.1 շենք | ք.Երևան, Վարդանանց 110 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011022432 | Հեռ. 55-84-83, 57-11-16 |
| ՀՎՀՀ 02505554 | Հ/Հ 163007031509 |
| էլ. հասցեն՝ gnumner@gov.am | ՀՎՀՀ 01548908 |
| | էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | ծագման երկիրը և արտադրողը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | միավոր գինը ՀՀ դրամ | ընդհանուր գինը ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 40 | 30141200/2 | հաշվասարք, գրասենյակային COLLIN | COLLIN ՉԺՀ | 12 նիշանի, սեղանի 18X13.5 սմ +/-10% չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա: | հատ | 1,700 | 5,100 | 3 | ք. Երևան, Հանրապետության հր., Կառավարական թիվ 1 շենք | 3 | մինչև 2018թ.-ի ապրիլի 30-ը |
| 42 | 30192121/2 | գրիչ գնդիկավոր CELLO | CELLO ՉԺՀ | Գնդիկավոր, 0.5 և 0.7 մմ ծայրերով, պատյանով, կափարիչով (գրպանին ամրացնելու ամրակով), ներքևից կամ վերևից բացվող (միջուկը փոխելու համար), գրիչի երկարությունը առնվազն 140մմ, միջուկի թանաքի լցված մասը առնվազն 95մմ, գույները՝ կապույտ, կարմիր, կանաչ և սև՝ գնորդի հետ համաձայնեցված քանակներով: | հատ | 70 | 21,000 | 300 | ք. Երևան, Հանրապետության հր., Կառավարական թիվ 1 շենք | 300 | մինչև 2018թ.-ի ապրիլի 30-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 43 | 30192128/2 | գրիչ գելային GEL PEN | GEL PEN ՉԺՀ | Գրիչ գելային, 0.5 և 0.7 մմ ծայրերով, պատյանով, կափարիչով, գրպանին ամրացնելու մետաղական ամրակով, գրիչի երկարությունը առնվազն 147մմ, գույները՝ կապույտ, կարմիր, կանաչ և սև՝ գնորդի հետ համաձայնեցված քանակներով: | հատ | 75 | 15,000 | 200 | | 200 | |
| 45 | 30192137/1 | մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ Amigo | Amigo ՉԺՀ | Հասարակ, սև, կարծրությունը HB: | հատ | 22 | 1,980 | 90 | | 90 | |
| 46 | 30192154/1 | կնիքի լրացուցիչ բարձիկներ COLOP R40 | COLOP Ավստրիա | Կապույտ գույնի, նախատեսված կնիքի սարքի համար, չափը՝ R40: | հատ | 2,000 | 6,000 | 3 | | 3 | |
| 47 | 30192154/2 | կնիքի լրացուցիչ բարձիկներ COLOP R50 | COLOP Ավստրիա | Կապույտ գույնի, նախատեսված կնիքի սարքի համար, չափը՝ R50: | հատ | 2,200 | 6,600 | 3 | | 3 | |
| 48 | 30192160/1 | շտրիխներ MICAI | MICAI ՉԺՀ | Նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստեր սպիտակեցնելու (ջնջելու) համար, վրձինով, 20 մլ հերմետիկ փակվող տարայով: | հատ | 155 | 10,850 | 70 | | 70 | |
| 49 | 30192230/1 | սկոչ՝ երկկողմանի | Packing tape | երկկողմանի սոսնձված, 1-ից 2սմ լայնությամբ: | հատ | 150 | 600 | 4 | | 4 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սոսնձված Packing tape | ՉԺՀ | | | | | | | | |
| 50 | 30192710/3 | սոսնձամատիտ գրասենյակային Glue stick | Glue stick ՉԺՀ | Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, չափագրված 35գ: | հատ | 250 | 1,000 | 4 | | 4 | |
| 51 | 30192720/1 | գծանշիչ SKYGLORY | SKYGLORY ՉԺՀ | Տարբեր գույնի (առնվազն 5 գույն)՝ գնորդի հետ համաձայնեցված քանակներով, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով: | հատ | 130 | 13,000 | 100 | | 100 | |
| 52 | 30192740/1 | թուղթ գունավոր, A4 ձևաչափի SINAR SPECTRA | SINAR SPECTRA Ինդոնեզիա | Բաց վարդագույն թուղթ՝ տպագրելու համար , A4, 90 գ/մ² (210x297) մմ ձևաչափի, որակյալ, տուփում՝ 500 հատ: | տուփ | 3,500 | 17,500 | 5 | | 5 | |
| 53 | 30192780/1 | էջաբաժանիչ JIA TE | JIA TE ՉԺՀ | Նախատեսված էջերը նշելու համար, կպչուն, մեկ հատում առնվազն 4 գույներ: | հատ | 180 | 3,600 | 20 | | 20 | |
| 54 | 30197100/1 | կարիչի մետաղալարե կապեր Max | Max ՉԺՀ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ 24/6, առնվազն 30 էջ կարելու համար, տուփում՝ 1000 հատ: | տուփ | 70 | 2,800 | 40 | | 40 | |
| 55 | 30197100/2 | կարիչի մետաղալարե կապեր Max | Max ՉԺՀ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ N 10, տուփում՝ 1000 հատ: | տուփ | 50 | 500 | 10 | | 10 | |
| 56 | 30197100/3 | կարիչի | DL | Գրասենյակային | տուփ | 70 | 2,800 | 40 | | 40 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մետաղալարե կապեր DL | ՉԺՀ | կարիչների մետաղալարե կապեր բլոկներով, չափսերը 26/6, տուփում՝ 1000 հատ: | | | | | | | |
| 57 | 30197230/1 | թղթապանակ AN PAI | AN PAI ՉԺՀ | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծալքով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, հաստությունը՝ 4-5սմ: | հատ | 500 | 12,500 | 25 | | 25 | |
| 58 | 30197231/1 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ Impulse | Իմպուլս -Ա ՓԲԸ, ՀՀ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն, թաղանթի հաստությունը՝ առնվազն 50 միկրոն: | հատ | 8.5 | 17,000 | 2,000 | | 2,000 | |
| 59 | 30197234/1 | թղթապանակ, կոշտ կազմով AIBA RADO | AIBA RADO ՉԺՀ | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով /ռեգիստր/, համապատասխան չափի կռնակով (ծալքով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, հաստությունը՝ 7 Յսմ: | հատ | 540 | 8,100 | 15 | | 15 | |
| 60 | 30197235/1 | թղթապանակ՝ | POP | Պլաստիկ, ողղահայաց | հատ | 220 | 3,300 | 15 | | 15 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ամրակով POP | ՉԺՀ | ամրակով, A4 (210x297)մմ ձևաչափիթղթի համար:Կռնակի լայնությունը՝ 15-20մմ: | | | | | | | |
| 61 | 30197320/1 | կարիչներ Max | Max ՉԺՀ | Գրասենյակային կարիչ, առնվազն 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար: | հատ | 420 | 2,100 | 5 | | 5 | |
| 62 | 30197320/2 | կարիչներ Max | Max ՉԺՀ | Գրասենյակային կարիչ, 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար: | հատ | 1,150 | 9,200 | 8 | | 8 | |
| 63 | 30197320/3 | կարիչներ DL | DL ՉԺՀ | Գրասենյակային կարիչ, 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար: | հատ | 2,200 | 4,400 | 2 | | 2 | |
| 64 | 30197622/2 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ Captain | "Ինտեր նեյշնլ փեյփր" ՓԲԸ, ՌԴ | A4 ձևաչափի (210X297մմ), չկավճած թուղթ, նախատեսված լազերային, շիթային և պատճենահանող սարքերով տպագրելու (նաև երկկողմանի և գունավոր տպագրության) համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, խտությունը՝ 80 գ/մ$^2$ , սպիտակությունը՝ առնվազն՝ CIE _ 168%, հաստությունը՝ 110 միկրոմետր +/-3%, անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս, անհարթությունը՝ 200 | տուփ | 1,540 | 2,618,000 | 1,700 | | 1,700 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մ/ր +/-10%: Գործարանային փաթեթավորմամբ (յուրաքանչյուր տուփում՝ 500 թերթ): | | | | | | | |
| 65 | 30197646/1 | թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ Pioneer | Նավիգատոր Կոմպանի Պորտուգալիա | A3 ձևաչափի (297x420մմ), չկավճած թուղթ, նախատեսված լազերային, շիթային և պատճենահանող սարքերով տպագրելու (նաև երկկողմանի և գունավոր տպագրության) համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, խտությունը՝ 80 գ/մ$^2$, սպիտակությունը՝ առնվազն՝ CIE _168%, հաստությունը՝ 110 միկրոմետր +/-3%, անթափանցելիությունը՝ 94 %-ից ոչ պակաս, անհարթությունը՝ 200 մլ/ր +/-10%: Գործարանային փաթեթավորմամբ (յուրաքանչյուր տուփում՝ 500 թերթ): | տուփ | 4,000 | 120,000 | 30 | | 30 | |
| 67 | 30199232/1 | ծրար, մեծ, A4 ձևաչափի համար Libra | Libra ԱՄԷ | Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ$^2$ մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող: | հատ | 30 | 750 | 25 | | 25 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 69 | 30199420/1 | թուղթ նշումների համար, սոսնձվածքով JIA TE | JIA TE ՉԺՀ | Թուղթ նշումներ կատարելու համար, կպչուն, սոսնձվածքը 1,25 սմ-ից ոչ պակաս, 7,6 x 7,6 սմ չափերի, տուփում՝ առնվազն 100 հատ: | տուփ | 110 | 11,000 | 100 | | 100 | |

- Ապրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար.
- Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022432
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

**ՎԱՃԱՌՈՂ**

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 40 | 30141200/2 | հաշվասարք, գրասենյակային COLLIN | - | - | - | 5100 | 5100 | 5100 | 5100 | 5100 | 5100 | 5100 | 5100 | 5100 | 5,100 |
| 42 | 30192121/2 | գրիչ գնդիկավոր CELLO | - | - | - | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21000 | 21,000 |
| 43 | 30192128/2 | գրիչ գելային GEL PEN | - | - | - | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15000 | 15,000 |
| 45 | 30192137/1 | մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ Amigo | - | - | - | 1980 | 1980 | 1980 | 1980 | 1980 | 1980 | 1980 | 1980 | 1980 | 1,980 |
| 46 | 30192154/1 | կնիքի լրացուցիչ բարձիկներ COLOP R40 | - | - | - | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6,000 |
| 47 | 30192154/2 | կնիքի լրացուցիչ բարձիկներ COLOP R50 | - | - | - | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6,600 |
| 48 | 30192160/1 | շտրիխներ MICAI | - | - | - | 10850 | 10850 | 10850 | 10850 | 10850 | 10850 | 10850 | 10850 | 10850 | 10,850 |
| 43 | 30192230/1 | սկոչ՝ երկկողմանի սոսնձված Packing tape | - | - | - | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | 30192710/3 | սոսնձամատիտ գրասենյակային Glue stick | - | - | - | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1,000 |
| 51 | 30192720/1 | գծանշիչ SKYGLORY | - | - | - | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13000 | 13,000 |
| 52 | 30192740/1 | թուղթ գունավոր, A4 ձևաչափի SINAR SPECTRA | - | - | - | 17500 | 17500 | 17500 | 17500 | 17500 | 17500 | 17500 | 17500 | 17500 | 17,500 |
| 53 | 30192780/1 | էջաբաժանիչ JIA TE | - | - | - | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3,600 |
| 54 | 30197100/1 | կարիչի մետաղալարե կապեր Max | - | - | - | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2,800 |
| 55 | 30197100/2 | կարիչի մետաղալարե կապեր Max | - | - | - | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| 56 | 30197100/3 | կարիչի մետաղալարե կապեր DL | - | - | - | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2,800 |
| 57 | 30197230/1 | թղթապանակ AN PAI | - | - | - | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12500 | 12,500 |
| 58 | 30197231/1 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ Impulse | - | - | - | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17000 | 17,000 |
| 59 | 30197234/1 | թղթապանակ, կոշտ կազմով AIBA RADO | - | - | - | 8100 | 8100 | 8100 | 8100 | 8100 | 8100 | 8100 | 8100 | 8100 | 8,100 |
| 60 | 30197235/1 | թղթապանակ՝ ամրակով POP | - | - | - | 3300 | 3300 | 3300 | 3300 | 3300 | 3300 | 3300 | 3300 | 3300 | 3,300 |
| 61 | 30197320/1 | կարիչներ Max | - | - | - | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2,100 |
| 62 | 30197320/2 | կարիչներ Max | - | - | - | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9,200 |
| 63 | 30197320/3 | կարիչներ DL | - | - | - | 4400 | 4400 | 4400 | 4400 | 4400 | 4400 | 4400 | 4400 | 4400 | 4,400 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 64 | 30197622/2 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ Captain | - | - | - | 2618000 | 2618000 | 2618000 | 2618000 | 2618000 | 2618000 | 2618000 | 2618000 | 2618000 | 2,618,000 |
| 65 | 30197646/1 | թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ Pioneer | - | - | - | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120,000 |
| 67 | 30199232/1 | ծրար, մեծ, A4 ձևաչափի համար Libra | - | - | - | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 |
| 69 | 30199420/1 | թուղթ նշումների համար, սոսնձվածքով JIA TE | - | - | - | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11,000 |
| Ընդամենը՝ | | | -- | -- | -- | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 | 2,914,680 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022432
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

**ՎԱՃԱՌՈՂ**

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հեռ. 55-84-83, 57-11-16
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
էլ. հասցեն՝ SSmartline@mail.ru

Հավելված N 3
«20» մարտի 2018թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/03-8 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
______________________
հվհհ ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » 2018 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 2018թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 20 » մարտի 2018թ. կնքված*
*ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-18/03-8 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն